ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹ

ԹԻՒ 3—6 · ՄԱՐՏ—ՅՈՒՆԻՍ ԿԹ. ՏԱՐԻ 1955

# ԿՑՈՒՐԴՔ

# Ս. ԵՓՐԵՄԻ ԽՈՐԻՆ ԱՍՈՐԻՈՅ

## ԿՑՈՒՐԴ ԻԲ.

ԱՒՐՀՆԵԱԼ Է ՏԷՐՆ ԱՄԵՆԱՅՆԻ, ՈՐ Է ՀՈԳԱԲԱՐՁՈՒ ԱՄԵՆԱՅՆԻ

*Դաւիթ թագաւոր եւ մարգարէ զԱքիտոփէլ հարցանէր.*
*եւ զի իմաստուն էին խրատք նորա, եղ զնա մարգարէ երկրորդ.*
*եւ ոչ զխրատ Հոչայ անարգէր Դաւիթ եւ որդի նորա.*
*եւ զի մարգարէն լուաւ զոյզն մարդոյ,*
*քանի՛ եւս լուիցուք մեք մարգարէին։*
*Դանիէլ արքային Բաբելոնի եղեւ խրատու բարի խրատու,*
*զի քաւեսցէ զպարտիս տրովք եւ քաւելով ի վերայ տնանկաց.*
*եթէ նա որ կուրացոյց զթագաւորսն*
*եւ սպառեաց զորդիս թագաւորաց,*
*եւ հրձիգ արար զտունս քաւութեան եւ առ զոսպաս պաշտամանն.*
*Նա որ չարչարեաց զամենայն ոք չար,*
*եւ հպարտացաւ ի վերայ Տեառնն ամենեցուն,*
*եւ վաթսնկանդնեան պատկերին*
*երկիրպագանել ընդ նորա խորհեցաւ։*
*Իսկ եթէ այնր անաւրինի զոյ հնար զի քաւեսցի ի ձեռն տրոց,*
*որպէս եւ խոստացաւ Դանիէլ հայրն հոգւոց.*
*ո՞ արհամարհեսցէ զտրովք, որ զայսչափ զաւրութիւնս ունին.*
*զի թէ նոքաւք կեայր,*
*չիք անաւրէնութիւն որ ապստամբէ ի նոցանէ։*
*Որ կարաւտ ես թողութեան, տուրք ողորմութեան են բժիշկք քո.*
*Ընդեա զմեղս քո, զոր գործեցեր, ի ձեռն տրոց, զոր տացես դուրարի են քեզ տուրք ողորմութեան,*
*ի նմանութիւն են մկրտութեան.*
*զի չիք քեզ հնար մկրտելոյ, զոյ հնարք արդարանալ տրովք։*

ԻԲ. B թղ. 16ա։ D, էջ 46—49։ E թղ. 59ա, 60ա։

1 D զաքիտոփէլ։ E զակիտոբէլ։ — 3 D որդին։ — 13 E վաթսունկանդնեան։ — 14 D երկրպագել. E երկրպագանել։ — 15 D քաւեսցէ։ — 20 D բժիշկ։ — 24 D հնար արդարանալոյ։



© National Library of Armenia

Յայնմանէ զոր ետ քեզ Աստուած, դիր առաջի ծառայից նորա.
փոքուն զոր տաս, աւրհնի բազում ինչ որ մնայ քեզ,
ոչ պահանջէ ի քէն ընդ արարածոյ քո,
եւ ոչ ընդ յղութեան եւ ծննդեան քոյ.
եւ ոչ ընդ լուսոյ եւ ծծելոյ զաւդ,
եւ ոչ ընդ անարգանաց եւ խաչի իւրոյ:
Ոչ արար զմեզ նոքաւք պարտապանս,
քանզի չէ իսկ հնար թէ հատուսցին.
զի որչափ յաճախեսցուք՝ արդարասցուք ընդ այսր ամենայնի.
յոյժ սակաւ է, իբրու զամենայն ինչ նա ետ մեզ.
թէ տացուք նմա ի նորայոյն, գրէ զանձն իւր ընդ պարտապանս,
զի դարձուսցէ մեզ ընդ միոյ հարիւր:
Փոխանակ այսր, որ մնայ ի մէնջ,
տայ մեզ զայն որ ընդ մեզ երթայ.
փոխանակ այսր, որ ոչ բոչխնի, տայ մեզ զայն որ բոչխնի:
Ո՛նիւթ որ ժամանակեան է, եւ շահ իւր յաւիտենից.
ասա մնայ զլուխն, եւ վարձ նորա յղարկի ընդ մեզ:
Պաչտաւնեայ է նա այսր կենաց եւ ոչ իշանէ ընդ մեզ ի դժոխս,
զի անձամբ իւրով ոչ յղարկի ընդ մեզ,
տրովք եւ հանդստեամբ ցրուեսցուք զնա, սիրելիք,
զի ցանկեսցուք նովաւ զխրամատութիւնս,
զոր խրամատեցաք ի ժողովելն զնա,
եւ զի ոչ ստացաք նովաւ զարքայութիւնն,
մի երթիցուք նովաւ ի դժոխսն:
Մի երթիցեն ընդ մեզ պարտք նորա, եւ մնասցէ նա ի ձեռս այլոց.
զիարեալացին տրովք իւրովք քաւէր նա ի պարտեաց իւրոց,
որ զբազում պարտս թողու, զսակաւ պարտիս քանի՛ եւս թողցէ.
մինչ դեռ գոյ ի ձեռս ձեր, ջնջեցէք նովաւ զպարտս ձեր:

## ԿՅՈՒՐԴ ԻԳ.

ՓԵԶ ԱՒՐՀՆՈՒԹԻՒՆ, ՏԷՐ ՄԵՐ, ԶԻ Ի ՇՆՈՐՀԱՑ ՔՈՑ ԿԵՐԱԿՐԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՒԱՏԱՑԵԱԼՔ

Եւ Աղամայ զդրախտն զամենայն, եւ արդել ի նմանէ զմի պտուղն.
եթող նա զամենայն ծառն եւ դիմեաց ի վերայ պատուիրելոյն:
Աղենայ նման է սեղանս այս մեր,
եւ ապահութեան՝ պատուիրեալ ծառոյն.
վարեսցուք ամենայնիւ որ տուեալ է մեզ,
եւ աւտարասցուք ի հրաժարեցելոյ անտի:

ԻԳ. B թղ. 18բ: D, էջ 50—53: E թղ. 60ա—61ա:
3 D ապահութիւն: — 5 D որ տուեալն են:

1769-71
ՀԱՍՍՀ-ԱՄ ՍՍՀ



Ի ձեռն միոյ պտղոյն կորոյս Աղամ զպատմուճան փառաց իւրոց.
ի ձեռն աւելորդ կերակրոյն կորուսանէ մարդ զազատութիւն իւր.
քանզի ուտեմք մեք զաւելորդն,
եւ ծանրանան թեւք աղաւթից մերոց.
փոքր ի չատէ կերիցուք զի թեթեւասցին թեւք խորհրդոց մերոց:
Զափով մատիցուք մեք առ դինի եւ կշռով առ կերակուրսն.
մի անցցուք ընդ այս սահման, զի մի դատեսցին զմեզ խորհուրդք.
Լուր առաքելոյ, իբրու հատանէ ի վերայ կերողաց եւ արբեցողաց,
եւ հաւասարէ սպանողաց.
Ոչ, ասէ, ժառանգեսցեն զարքայութիւն:
Լի որովայնիւ մերով կերիցուք, եւ ընդէ՞ր ագահեմք զաւելորդն.
զի աւելորդն որ մտանէ. հանէ զմեզ յարքայութենէն.
փոքր է որովայն տեսլեամբ իւրով, զի բաւական է նմա սակաւ ինչ.
յոյժ ընդարձակ է առաքինութիւն, եւ սակաւ է նմա բազում ինչ:
Փոքր ի չատէ կերիցուք, եւ կայ յաւիտենից խոստումն մեր.
եթէ առնուցումք զաւելորդն, ոչ անցանեն նախատինք նորա:
Քան զամք մեք ի պակասութիւն, ընդէ՞ր ոչ յառաւելութիւն.
զի իբրու առնու ոք զաւելորդն, գրէ՛ զնա ընդ որկորեայս:
Ի ժամանակեան սեղանոյս գոհասցուք,
զի արժանի լիցուք յաւիտենից սեղանոյն.
մի ի ձեռն անցաւորիս աւտարասցուք յայնմանէ, որ միշտն կայ.
են որ հատեալ են ի գինւոյ,
եւ յամենայն խորտկաց որ առաջի մեր է.
զի ոչ նմանեցաք պահողաց, մի նմանեսցուք որկորէից:
Գոհութեամբ մատիցուք առ գինի,
եւ աւրհնութեամբ առ կերակուրս.
աւրէն է զի վասն ամենայն իրիք
գոհասցուք զՏեառնէ ամենայնի.
Հրեշտակք ցանկացան սեղանոյն Աբրահամու,
երիս գրիւս նաչիհ եւ որթ հասոյց երից արանց.
գիտաց նա թէ զուարթունք են, յաճախեաց հասոյց աւելի:
Զի ի նչխարէ հրեշտակաց բաշխեսցէ ընտանեաց իւրոց:
Ուտէ հուր զիրս ինչ եւ մնան մնացորդք նորա.
բայց ի զուարթնոցն ոչ մնաց ինչ, զի դարձաւ յոչինչ կերակուրն.
փոխանակ որթոն խոստացաւ պտուղ
եւ փոխանակ նաչհոյ երից գրուաց
ծագեաց ի զաւակէ նորա որ է երկրորդ աստուածութեանն.
Աւրհնեսցի յարկ ծառայից քոց, ի կոխել երկրպագուաց քոց,
աճեսցէ սեղան սորա, յորում ուրախ են սուրբք քո:

9 D քանի ուտեմք: — 12 D կերակուրս: — 13 E խորհուրդ: — 23 D քանդամք. հրատարակիչը՝ «թերեւս կամի ասել զանդամիմք»: — 28 D որք: — 43 D որ երկրորդ Աստուածութեանն: — 44 E չունի ի կոխել երկրպագուաց քոց:

© National Library of Armenia

## ԿՅՈՒՐԴ ԻԴ.

ԱՒՐՀՆԵԱԼ ՈՐ ԵՏ ՄԵԶ ԿԵՐԱԿՈՒՐ ԵՒ ԽՈՍՏԱՑԱՒ ԶԴՐԱԽՏՆ ԱԴԵՆԱԿԱՆ

Ի միտ առցուք, եղբարք սիրելիք,
քանի՞ բարութիւնս ետ մեզ Տէր մեր.
զի ի ծովու եւ յերկրի եւ յաւդս հաստատեալ է կերակուր մեր.
հաստատեաց թռչունս վասն մեր հանդերձ սուրբ անասնովք:
Զձկունս դեռոց յաճախեաց մեզ եւ զծովու եւս յաւել մեզ.
կերակուրք պէսպէս համոց լինին մեզ ի մի ընչէ,
եւ խորտիկք անհամարք.
յայտնի է զի ի ձիթենւոյ լինին եւղք ազգի ազգիք
ի դարման եւ ի խրախութիւն եւ ի ջերուցումն եւ ի զովացումն:
Զի եւ բեր որթոյ մի է եւ չէ մի. մի երեւի եւ այլափոխք են
պտուղք նորա տեսլեամբ եւ ճաշակաւք.
թէ որչափ դարձեալ գինիս բղխէ հանէ փայտ որթոյ,
աւր մի ողջ սակաւ է ինձ բովանդակել զթիւս նոցա:
Ահա լերինք լի են մրգովք եւ դաշտք պտղովք ցանկալեաք,
ծով եւ ցամաք վաստակին բերել զամենայն պէտս մեր.
ահա դարձեալ եւ նոքին ծառքն պէսպէս պտուղս կարկառուն մեզ.
զի մին բղխէ զպարարութիւն, եւ ընկեր նորա զքաղցրութիւն:
Ետ մեզ եւ այլ պտուղս, որ նոքաւք լուսաւորին աչք մեր,
եւ ուրախ լինին նոքաւք ծոցք մեր եւ բժշկին նոքաւք ախտք մեր.
եւ կողմանք ամենեքեան իբրեւ զանդամս զմիմեանց հոգան:
Համբարի կողմն ընկերի իւրում եւ համբարի ի կողմանէ նորա.
խթէ սէր եւ գութ զերկիր հոգալ զծով որ շուրջ է զիւրեւ,
եւ մեծացուցանէ եւ ինքն ծով զերկիրս որ են զեղերքք նորա.
ետ եւ մեզու թռչուն ձրի քաղցրութիւն, որ պատուական եւս է:
Ետուն որթ եւ ձիթենի գինի եւ եւղ առանց գնոց.
ետ կաթն ստնդիեցաց. եւ բուսոյց խոտ անասնոց.
գհիւանդս բանձարով դարմանեաց եւ զառողջս կատարեալ հացիւ.
պատրաստեաց երկիր զսերմանս իւր եւ ծառք զպտուղս իւրեանց:
Եւ ոչ երկիր եւ ոչ ծառք պահանջեցին երբեք մաքս ի մէնջ.
Յիսուս հաստատեաց զամենայն եւ ետ մեզ առանց գնոց զամենայն.
իսկ մեք գնեմք եւ տամք գնոց՝ զոր ինչ ձրի չնորհեաց մեզ.
ետ մեզ հողմս եւ աւդ եւ հուր եւ ջուր ձրի:
Եւ այսպէս բղխէ ի նմանէ ամենայն դարման առանց արծաթոյ.
արդելին ոմանք ջուր ի ծարաւ. եւ մոգք հուր յԱսորեստանի
արդելին հողմս չինուածովք իւրեանց
եւ զլուսաւորս յարկովք իւրեանց.

ԻԴ. B 20ա: D 53—56: E 61ա—62բ:
8 DE ձիթենոյ. եղք: — 14 D ցանկալեօք. E ցանկալեաւք: — 25 DE եղ. D գնոյ:



ի մեր սակս տարածանին ամպք եւ վասն մե՛ր հոսանք նոցա:
Հողմք ի գիշերի եւ ի տունջեան ահա վաստակին վասն մեր.
վասն մեր եւ արեգակն ծագէ հանապազ եւ մտանէ,
զի կոչեսցէ ի վաստակ ծագումն նորա
եւ ի հանգիստ կատարելով իւրով.
լոյս նորա հալածէ զխաւար մեր,
տապ նորա հասուցանէ զպտուղս մեր:
Ընթացք նորա չափ է տունջեան.
եւ մտանել նորա իշխանութիւն խաւարի.
զի ահա ակամբ է զեղեցկութիւնք.
եւ բերէ հոտոտելեաց եւ քմաց բիւր ճաշակք եւ համք:
Աւրհնութիւն նմա վասն ամենայնի:

## ԿՅՈՒՐԴ ԻԵ.

ԱՒՐՀՆԵԱԼ ՈՐ ԿԵՐԱԿՐԷ Ի ՄԵԾՈՒԹԵՆԷ ԻՒՐՄԷ ԶԱՄԵՆԱՅՆ ՔԱՂՑԵԱԼՍ ԵՐԿՐԻ

Զանձն իւր հրաւիրեաց առ Զակքէ Տէր մեր,
իբրեւ ետես զմիտս նորա,
զի ծարաւի էր աւտարանալ ի մեղաց եւ յագահութենէ իւրմէ.
ի մտանել Տեառն ի տուն նորա ընակեցաւ սէր ի սրտի նորա.
մերկացաւ միանգամայն յամենայնէ,
ի յափշտակելոյ եւ ի ժառանգելոյ:
Դատեաց զանձն իւր յաւրինաց
եւ չորեքկին դարձոյց զյափշտակեալն.
եւ յաւել եւս յաւրինացն ի բաշխել զկէս ընչից իւրոց:
Նախ կատարեաց զտուգութիւնն. եւ ապա սկսաւ յողորմութիւն.
հատոյց նախ զոր պարտ էր եւ ապա ետ փոխարդաց:
Ի դարձուցանել զամենայն զոր գրկեաց՝ զպարտս իւր հատուցանէր.
եւ ի բաշխել զկէս ընչից իւրոց՝ փոխ տայր Աստուծոյ իւրում:
Ո՛ պարտական, որ յանկարծակի եղեւ պարտատէր,
հատոյց մարդկան յերկրի եւ Աստուծոյ փոխ ետ ի բարձունս:
Առաքեաց ընդ չորս կողմանս, ո՛չ զի ածցեն զպարտապանս իւր.
այլ զի ածցեն զյափշտակեալս, որ դարձան եւ եղեն պահանջող:
Աղաղակէր նա խնդալով, թէ Առէք յափշտակեալք զգանձս ձեր.
եւ աւարեալք զտացուածս ձեր:

31 D գնոյ: — 34 D արդել:
40 DE զի կոչեսցի վաստակ. այսպէս կ'առաջարկէ Պետրոսեան: — 46—47 աղաւաղուած կը թուին տողերս. պէտք է իմանալ զի արեգակամբ են զեղեցկութիւնք եւ բերք եւ հ.:
ԻԵ. B 22բ: D 56—59: E 62բ—63ա:
1 E զաքէ: — 7 D չորեքին: — 17 E պահանջաւղ: — 19 BD աւարեալք. Պետրոսեան ուղղած՝ աւարեալք:

© National Library of Armenia

Զորոց առեալ էր սաաեր մի, մտին առին չորեքկին եւ ելին.
եւ զորոց յափշտակեալ էր զստացուածս, առ զնա բազմապատիկ.
Ժողովեցան եւ պարտապանք, զի լուան զձայն թողութեան,
առին եւ ելին խնդութեամբ զգրաւականս եւ զմուրհակս իւրեանց:
Զարմա՜նք. տեսանել էր ի տան Զակքէի
զյափշտակեալսն զայն եւ զաղքատս.
Յափշտակեալքն առին զստացուածս իւրեանց
եւ աղքատքն զդարմանս իւրեանց.
մտին մերկք եւ զգեցան. եւ բոկք ելին ագուցեալք:
Քաղցեալք լցան եւ նշխարեցին.
եւ կարաւտեալք պարկս բարձին.
եւ ծառայից զաղատութիւն եւ պարտապանաց զգիր իւրեանց.
եւ եւ վարձս ընդ զրկանաց՝ եկաց եւ պանդխտաց:
Մեծ զարմանք գործեցան փոփոխմամբն որ եղեւ անդ.
զի աւարողն եղեւ աւարեալ եւ յափշտակողն յափշտակեալ.
իբրու նոյն էր եւ չէր նոյն.
նա զի այլակերպեցաւ յառաջին պայմանէն.
զի այր որ զրկէր զամենայն ոք՝
զիւրն եւս սկսաւ տալ այլոց:
Յափշտակեալքն որք առին՝ գոհանային.
եւ Զակքէ ուրախ էր ի տալն իւրում.
յարողաց եւ ի տուողաց ել անդ աւրհնութիւն Որդւոյ աւծելոյ:
Այս են հանդիսաք ճշմարիտք, որ սոքաւք հաչտի Աստուած,
որ հանդուցանէ զծառայսն եւ զաղատս
եւ զպարտապանս հանդերձ աղքատովք:
Ի հանգստեանն Զակքէի ամենայն ուրեք
լի էր գոհութեամբ բերան իւր.
մի հանդուսցուք զանձինս սակաւուց,
եւ ցաւեցուսցուք զսիրտս բազմաց:
Եւ զի նստուցէք զմեզ, սիրելիք, առ այս սեղան ժամանակեան.
նստուսցէ զձեզ արքայն Քրիստոս առ սեղանն իւր յաւիտենական:

22 E թողութեամբ: — 24 E զաքէի. D զայնս, եւ զաղքատս յ. E զայն եւ զաղքատս: յ: — 34 E յափշտակաւղն: — 36 DE այպանմանէն. ուղղեցի պայմանէն: — 42 D զծառայս:



## ԿՑՈՒՐԴ ԻԶ.

ԱՒՐՀՆՈՒԹԻՒՆ ՈՐԴՒՈՅ ԱՒԾԵԼՈՅ, ՈՐ ԿԵՐԱԿՐԷ ԶԱՄԵՆԱՅՆ ՅԻՒՐՄԷՆ

Հրեշտակք որ ոչ կերակրին, ոչ խափանին յաւրհնութենէ.
մեր զի լցաւ կարաւտութիւն, գոհասցուք զնմանէ, զի յագեցաք.
Թէ հրեշտակք գոհանան, որ ոչ աշխատեն զարարածս
որ պաշտեն, արարածք զիա՞րդ լռեսցեն յաւրհնութենէ:
Յամենայն ժամու թէ դատարկ ոք է,
յայսմ ժամու չէ աւրէն խափանել.
Եթէ մինչ քաղցեալն էաք աւրհնեցաք,
քանի՛ եւս այժմ զի յագեցաք.
յաւուր պատարագի քոյ մի՛ տար տեղի մարդոյ տրտնջել զքէն.
զի ելանէ տրտունջ նորա եւ ապախտ առնէ զպատարագն քո:
Զի գոհանան զքէն աղքատք, գոհասցեն զքէն եւ պանդուխտք.
մի՛ առնուր դու յաղքատաց եւ տացես զայն տուրս այլոց,
զիա՞րդ համարեսցի զայն քեզ Տէր քո, զի ոչ ի քումմէ եառուր դու.
Եթէ այլոց է տուրք քո, ո՞ւմ դարձցի վարձ ընդ այնորիկ:
Տուք ի ձերմէ, մեծատունք, զի ձեզ համարեսցի զայն Աստուած.
մի առներ բարի յընչից տնանկաց, եւ փառաւորեսցիս այնու
որ ոչ քո է.
զի՞նչ հարկ առնուլ յաղքատէ եւ տալ միւսում աղքատի.
զմին քաղցեցուցեր եւ զմին լցուցեր.
եւ ո՞ւր է անդ արդարութիւն քո:
Բարիոք առնես զի կերակրես զաղքատս.
բայց գուցէ զմեծատունս աղքատս առնիցես.
զի չէ մոռացեալ ամենադիտին,
թէ ուստի՞ է ժողովեալ պատարագն քո.
Ո՛ որ զգեցուցանես զաղքատս, գուցէ մորթիցես զմորթ տնանկաց.
որ տաս հաց քաղցելոց, մի թլփատեսցես զինչս կարաւտելոց:
Որ հոգարարձուդ ես աղքատաց,
մի անփոյթ առներ զտնանկաց քոց.
ահա աղքատք այդ են, ընդ քեւ հանդո՛
զանձինս բնակակցաց քոց.
զի՞նչ հարկ է տալ արտաքնոց,
իբրեւ ահա կարաւտեալք են ի տան քում.
մի՛ հոգար զարտաքնոց եւ անփոյթ առնիցես զներքնոց:
Մի՛ աւրհնեսցեն զքեզ արտաքինք եւ անիծանիցեն ներքինք.
մի՛ ժողովեր արտաքուստ երանութիւն
եւ ներքուստ վա՛յ դառնութեան.

Իզ. B 24բ: — D 60—62: E 63բ—64բ:
3 աշխատեն կը թուի աղճատուած. կարդա՞լ որ ոչ բոչինեն զարարածս. որ պաշտեն արարածք...: — 25 D ոհ. E անանդաց: — 27 E զտնանդաց: — 29 E հանդոյ:

© National Library of Armenia

Նախ ի ծառայս քո արդարացիր. եւ յորժամ լցցես զպէտս նոցա,
կատարեսջիր եւ արտաքնովքն:
Յովբ որ ի վերայ ծնգաց իւրոց սնոյց զորբս, այսպէս ասէ.
Թէ անարգեցի՞ երբեք զդատաստան ծառայից իմոց
յամենայն իրս յորս դատեցան ընդ իս.
ո՞ ոք լինիցի նմանող տրովք,
նմանեսցի նմա եւ քաղցրութեամբ իւրով.
լցուսցէ զքաղցրութիւն արտաքնոց
եւ հանգուսցէ զհոգիս ներքնոց:

## ԿՑՈՒՐԴ ԻԷ.

ԱՒՐՀՆՈՒԹԻՒՆ, ԿԵՐԱԿՐԻՁ ԱՄԵՆԱՅՆԻ, Ի ՔԱՂՑԵԼՈՑ, ՈՐՔ ԼՑԱՆ ԵՒ ՆՇԽԱՐԵՑԻՆ

Զի ուրախ եղեւ Զակքէոս, որ ետ նմա քաւութիւն մեղաց.
կեանս բնակեցոյց ի տան նորա, որդի Աբրահամու գրեաց զնա.
Փարիսեցին կոչեաց եւ անարգեաց զնա. ոչ ետ նմա յայսցանէ.
եմուտ եւ ա՛ռ քաւութիւն կինն մեղաւոր, որ կարդաց առ նա:
Մեծ ճաշ Փարիսեցւոյն ծանու ընչիւ՝ եկաց ի բաց.
արտասուացն ետ քաւութիւն, եւ նա ընկալաւ յանդիմանութիւն.
անարգեաց զսեղան Փարիսեցւոյն,
զի ետես այպանութիւն ի միտս նորա.
ետ քաւութիւն այնմ որ մեղաւ,
զի ետես զեղջ ի խորհուրդս նորա:
Այպանութիւն Փարիսեցւոյն ոչինչ զնա ||||

## ԿՑՈՒՐԴ ԻԸ.

| | | |

Քրիստոս աւրհնեաց զերկոսին.
աւրհնեսցէ զյարկս երկրպագուաց իւրոց.
զի տեսցէ զսիրաս սրբոց իւրոց,
եւ տացէ աճումն խնդրողաց իւրոց:
50 Զկենդանիս եւ զննջեցեալս ձեր քաւեսցէ յաշխարհն երկրորդ.
ուրախ լիջիք առ սեղան նորա,
որ ասա ուրախ արարէք զծառայս նորա:

Հրտ. Հ. Ն. ԱԿԻՆԵԱՆ

---

## ՍՏԵՓԱՆՈՍ ԱՍՈՂՆԻԿ ԵՒ ԿՈՄՍԱՍԱԴԱԳ

1. ԵԿԱՄՈՒՏ ՏԱՐՐՆԵՐ ՍՏ. ԱՍՈՂՆԻԿԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ: 2. Գ. 20 ԵՒ 22 ԽԱՐԴԱԽՈՒԱԾ: 3. ԲՈՒԼԳԱՐԱՑ ԲՈՐԻՍ Բ. ՅԱՐՆ ԵՒ ԵՂԲԱՅՐՆ ՌՈՄԱՆՈՍ: 4. ԿՈՄՍԱՍԱԴԱԳ ԵՂԲԱՅՐՆԵՐԸ: 5. ԱԼՈՒՍԻԱՆԻ ԵՐԲՈՐԴ ՈՐԴԻՆ ԳՐԻԳՈՐ ՏՈՒԿ

1.

*Ստեփանոս Ասողնիկ Տարօնեցի գրած է իր Պատմութիւնն տիեզերական 1004ին իբրեւ տարեգրութիւն երեք գրքերու մէջ, որոնք կը ներկայացնեն հին, միջին եւ նոր դարերու պատմական անցքերը, սկսեալ Ադամէն մինչեւ իր օրերը, կարճ ի կարճոյ, համառօտախօս: Հին եւ միջին դարերու համար ունեցած է աղբիւր հայ եւ հայերէն թարգմանուած օտար պատմագրութիւնները. ինքնակաց պատմիչ է 930—1003 տարիներու համար: Այս տուած է դաւանական հարցերէ եւ վիճաբանութիւններէ. զգուշացած է ողբերգութիւններէ, միշտ հետամուտ սակաւախօսութեան, «զի ոչ ճարուց են ժամանակ(ք), այլ դոյզն յիշատակաբանաց» (էջ 275. հրտ. Մալխասեան):*

*Աչքի առաջ ունենալով Պատմութեանս այս նկարագիրը, հարկադրուած ենք իբրեւ եկամուտ նշանակել այն բոլոր լայնածաւալ եւ կարճառօտ տեղեկները, որոնք կը հակասեն պատմագրին սկզբունքներուն:*

*Առնց են.*

*ա. Թուղթ Ներսէս Գ. կաթողիկոսի առ Կոստանդին Կայսր. Բ. 2, էջ 89, տ. 23—98, տ. 14. անհարազատ թուղթ մը, որ նաեւ Սեբէոսի Պատմութեան մէջ ներմուծուած է:*

*բ. Թուղթ առ մետրապոլիտն Սեբաստիոյ, գրեալ հրամանաւ Խաչիկ կաթողիկոսի. Գ. 21, էջ 202—243:*

*գ. Նախարան առ մետրապոլիտն գրուած Թուղթին. Գ. 20, էջ 201—202:*

*դ. Վերջաբան նոյն Թուղթին. Գ. 22, էջ 244—245:*

*ե. Անդրադարձութիւն Գ. 20 եւ 22 գլուխներուն. Գ. 24, էջ 246, տ. 1—6:*

*զ. Անդրադարձութիւն Գ. 20 գլուխին. Գ. 43, էջ 276, տ. 1—4:*

*է. Հատուած մը Բ. 2, էջ 87, տ. 16—88, տ. 19:*

*ը. Հատուած մը Գ. 7, էջ 178, տ. 19—179, տ. 7:*

*թ. Ա.—Գ. գիրքերու գլխակարգութիւններն եւ խոստարանութիւնները, պատրաստուած շատ վերջերոյ:*

*Յիշուած ա—ը մեծ եւ փոքր ներմուծութիւնները կը չօշափեն առհասարակ դաւանաբանական խնդիրներ եւ վէճեր, յուզուած Հայոց եւ Հոռոմոց մէջ:*

*Այստեղ մենք նկատի պիտի առնենք գ—զ տեղիքները եւ այն ըստ մասնէ միայն, որոնք սերտիւ կապուած են իրարու հետ:*

*Խմբագիրը Գ. 20 գլուխը կը խմբագրէ այսպէս. «Յաղագս անցուցանելոյ թագաւորին Վասլի ի ժողովարանէս Հայոց յաշխարհն Մակեդոնացւոց. եւ հալածանք ի ձեռն Մետրապոլտին Սեբաստիոյ:*

*Այլ յորժամ էր ի Բաղդատ թագաւորն Վարդ եւ խաղաղանայր թագաւորութիւն Վասլին՝ կամեցաւ յազգէն Հայոց որ ընդ իւրով թագաւորութեամբն՝ անցուցանել ի Մակեդոնիա ընդդէմ Բուլղարացն, զի չինեսցեն զերկիրն: Որ եւ տարեալ բնակեցոյց զյոլովս յաշխարհն յայն:*

*Եւ կանացի հովիւքն եւ մետրապոլիտն Սեբաստիոյ սկսան նեղել զազգն Հայոց վասն հաւատոյ: Եւ զրոնութիւն ի ձեռն առեալ՝ սկսաւ տանջել զքահանայս վասն հաւատոյ՝ եւ զգլխաւոր քահանայս Սեբաստիոյ քաղաքին երկաթեղէն կապանօք հասուցանէր ի դուռն թագաւորին: Եւ ի բանտի չարչարեալ զաւագն երիցանցն զԳաբրիէլ սպանին. զի էր այր ծեր եւ իմաստիւք լի եւ քաջալինդ ի հաւատս աստուածեղէնս: Այս եղեւ ի Նէ (986) թուականին: Իսկ այլք յաննչան քահանայիցն եւ երկու եպիսկոպոսունք Սեբաստիոյ եւ Լաւիսոյ, Սիսն եւ Յովհաննէս, ի ձեռն նոյն մետրապոլտին ընկալան զԺողովն Բաղկեդոնի, ի բաց կալով ի միաւորութենէն Հայոց: Եւ յայնմհետէ արգելին զժամածայն Հայոց ի քաղաքէն Սեբաստիոյ, մինչեւ ցգալ թագաւորին Վասլի յաշխարհն աբեւելից. զոր յիւրում տեղւոջն ասասցուք:*

*Եւ ապա մետրապոլիտն այն եւ այլ մետրապոլիտք սկսան թուղթս մեծամեծս գրել առ տէր Խաչիկ Հայոց կաթողիկոս: Որոց ընդդէմ պատասխանեալ քաջակորով իմաստիւք յառաջասացեալ վարդապետքն. զոր պարտ համարեցաք զմի ի Թղթոցն կարդել յայսմ վայրի» (էջ 201—202):*

*Կը յաջորդեն Գ. 21. «Պատասխանի Թղթոյն Մետրապոլտին Սեբաստիոյ, գրեալ հրամանաւ տեառն Խաչկայ Հայոց կաթողիկոսի: — Աստուածային վեհագոյն քան զմիտս...» (էջ 202—243) եւ Գ. 22. «Թէ զիա՛րդ չարաչար մահուամբ մեռաւ (Զ. սատակեցաւ) մետրապոլիտն Սեբաստիոյ եւ վասն թագաւորացն Բուլղարաց, որք սպանին զնա: — Իսկ յետ ընդունելոյ զթուղթս դպրս՝ ամօթալից լինէր մետրապոլիտն այն: Բայց ոչինչ թուլացաւ յիւրմէ չարութենէն: Այլ ի նմին ամի առաքեաց զնա թագաւորն Վասիլ յաշխարհն Բուլղարաց՝ խաղաղութիւն առնել: Եւ նոցա խնդրեալ զքոյր թագաւորին Վասլի ի հարսնութիւն ինքեանց. եւ տուեալ թագաւորին կին մի ի ծառայից իւրոց, ի կերպ քեռն իւրոյ՝ առաքեաց ի ձեռն մետրապոլտին: Եւ յերթալն յաշխարհն Բուլղարաց՝ ծանեան զկինն զայն. եւ դատեալ զմետրապոլիտն իբրեւ զչուն եւ խարեբայ՝ ցօղուն եւ ժժան պատեալ զնովաւ՝ հրով տոչորեցին թագաւորքն Բուլղարաց. զի էին նոքա երկու եղբարք, որք Կոմսասադքն կոչէին...» (էջ 244):*

*Գ. 24. «Եւ յայսմ ամի, որ էր Նէ (986) թուականն Հայոց, յորում չարաչար մեռանէր Գաբրիէլ երէց Սեբաստիոյ, եւ մետրապոլիտն, որ էր պատճառ սպանման նորա՝ չարաչար մահու չարչարեալ ի Բուլղարս սատակէր վրէժխնդրութեամբն Աստուծոյ. եւ հարաւ զօրն Վասլի յաշխարհին Բուլղարաց» (էջ 246, տ. 1—6):*

*Գ. 43. Վասիլ Բ. 1000 թուականին Տարսոնէն գալով «եկ ի կողմանս Մել(ի)տինոյ եւ ի կալն առաջի քահանայիցն Սեբաստիոյ՝ հրամայեաց համարձակ լինել յամենայն գործս հաւատոց եւ հնչեցուցանել զձայն ժամահարի, զոր արգելեալ էր մետրապոլիտն, որպէս յառաջն ասացաք» (էջ 276):*

*Շատ աչքի կը զարնեն Գ. 20 գլուխի խոստարանութեան քերականական անկանոնութիւնները. առաջին պարբերութեան սեռի խնդիրը կը պակսի. երկրորդ պարբերութեան «հալածանք» պէտք է ըլլար «յաղագս... եւ հալածանաց (Հայոց որ) ի ձեռն...»: Տարօրինակ է հոս «ի ժողովարանէս Հայոց» ասութիւնը. բնագիրն ունի «յազգէն Հայոց». պէտք է իմանալ «ի զաւառաց Հայոց որ ընդ թագաւորութեամբ Հոռոմոց»: Նաեւ բնագիրը կ'երեւցնէ անկանոնութիւններ. «կամեցաւ յազգէն Հայոց... անցուցանել ի Մակեդոնիա». չկան ոչ բային տէրն եւ ոչ ալ «անցուցանել» բային խնդիրը: Եթէ «ընդդէմ Բուլղարացն» տարուած է տեղական ժողովուրդը, տարուած է կռուի եւ ոչ թէ «զի չինեսցեն զերկիրն»: «Որ եւ տարեալ բնակեցոյց». լռուած է «որ»ին յարաբերականը. իմանալու է «Վասիլ» թագաւոր: Այս տեղահանութեան պիտի անդրադառնամ ապա:*

*Բնագիրը հոս կ'ընդհատի յանկարծօրէն. կը յաջորդէ նոր հատուած մը, որ եկամուտ է, անյարիր նախորդին հետ եւ տարօրինակ իր սկզբնաւորութեամբ: Բովանդակութիւնն է «Հալածանք ի ձեռն մետրապոլտին Սեբաստիոյ», ինչպէս խոստարանութեան մէջ նշանակուած էր. լսենք. «Եւ կանացի հովիւքն եւ Մետրապոլիտն Սեբաստիոյ սկսան նեղել զազգն Հայոց վասն հաւատոյ...»: «Հովիւք եւ Մետրապոլիտն Սեբաստիոյ սկսան... եւ զրոնութիւն ի ձեռն առեալ սկսաւ...»: Այսպէս: Յոգնակին եզակիի փոխուած. հալածողն է Սեբաստիոյ Մետրապոլիտը. որուն անունը լռուած է, թէ հոս եւ թէ յաջորդ գլուխներու մէջ: Հալածանքը տեղի ունեցած է Սեբաստիա. «այս եղեւ ի Նէ (986) թուականին». կրկնուած եւ այլուր: Մետրապոլիտը Հայոց «գլխաւոր» քահանաները երկաթեղէն կապանքներով*



© National Library of Armenia